

նանիչ կ'ընէին՝ «գերազանց Աստուածաբանութեան վարդապետ»¹. «Ամենիմաստ վարդապետ եւ արդիւնական քաջաքարող ուղղաշաւիղ»²: Հաննէ մասնաւորապէս կը շեշտէ թէ Կոլոտը կը սիրուէր «վասն առաքինի բարուցն եւ եւս անհատաբար ասորոցն-մեան, որ խրեմե էր ազգին մերոյ Նոր Ոսկեբերան եւ իրեն ապրածութեան»³.

Հակառակ ժամանակի չափազանցութիւններուն, Կոլոտի մասին եղած այս ճօխ եւ շեշտուած զնահատումներուն մէջ անճիշդ կէտեր չկան: Իր յաջողութիւնները կը ցուցնեն որ ճարտարախօս մըն էր Կոլոտ. ասի տարակոյս չի վերցնէր: Գալով աստուածաբանական հմտութեան, երբ լաւ կըշռենք իր ժամանակը, ուսումնասիրենք իր գրչէն ելած ընդարձակ յիշատակարանները, «Անտառ Այլաբանութեան» եւ Սկիթի Աստուածաբանու-

1 Նալեան «Վէմ հաւատոյ»:

2 Գրախո Զանկարի էջ 703: Ձանց կ'ընենք ամբողջովին մէջտեղ բերել այս տեսակ կոչումներ, որոնք առատ են ձեռագիր եւ տպագիր գործերու ճակատը կամ յիշատակարաններու մէջ եւ կը բաւականանանք Նալեանի խօսքերով. «Յիշեսցիք եւ զանմիջապէս հոգեւոր քննել է՛ք եւ վարժապետ, զառ ի քրիստոս ննջեցեալ, զարարնորդս իշխան Ապրածութանից եւ մանաւանդ զապրածութեան-մեան ի լոյս առելութեան- որբաբնիլ յիւրում ժամանակի, զՏէր Յոհաննէս Արքեպիսկոպոսն եւ գերամբարձ պատրիարքն Կոստանդնուպոլսոյ, յորոյ մարուր ստեանցն մարուր կաթանէ՝ ջամբեալ մեր ի մանկութենէ, ըստ որակութեան կաթին եղաք ասորարդս եւ յաղբերէ նորին վարդապետութեան զայս վտակս խաղացուցաք յարբումն աստուածասիրաց. որ պարագայս երկօք լիարուն գրքոյս (եթէ չիցէ յանդգնութիւն ասեալ) իւրեմ տնակ ապրածութեան անցնէ, ի պարզն շնորհ, ի լուսնեպետ զվարդապետին իմոյ անհատաբար իմաստեց: Ձէ եմե ազգեւորս ասորցի եւ անհատաբար իմոյ իմաստեց: Ձէ եմե ազգեւորս ասորցի եւ անհատաբար իմոյ իմաստեց» (Նալեան Մեկն. Նարեկի էջ 1135):

3 Հաննէ էջ 112-113: Հմմտ. Ձամէեան հօր. Գ էջ 770: